ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 6

16.05.2017 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/10Հ գնման պայմանագրի

ք. Երևան <<26>> 11 2020թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ՔՎԷ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Է. Քոչարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 07.05.2020թ. N 709-Ն որոշումը և ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 16.05.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/10Հ գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին 2020 թվականի հունիսի 16-ի N5 համաձայնագրի 1.1 ենթակետի սկզբում ավելացնել հետևյալ նախադասությունը՝

<<Պայմանագրի 4.1 և 4.1.1 կետերում 4 800 000 (չորս միլիոն ութ հարյուր հազար) թիվը և բառերը փոխարինել 5 138 700 (հինգ միլիոն հարյուր երեսունութ հազար յոթ հարյուր) թվով և բառերով:>>:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, տարածվում է 2020 թվականի հունիսի 16-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012573
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ՝

<<ՔՎԷ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ
ք. Վանաձոր, Գր. Լուսավորիչ փ. Յ-6 6-5
<<Ինեկոբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2051422103891001
ՀՎՀՀ 06933586

Տնօրեն՝

_____ Է. Քոչարյան
(ստորագրություն)

Կ.Տ.